Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը (28 հոկտեմբերի)

Ժամը 07:00-08:00

☐ Ընտրական տեղամասը բացելիս՝ հանձնաժողովի նախագահից ստացե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և ցուցադրական արձանագրությունը: Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունը փակցրե՛ք ընտրական տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի առաջին էջում գրանցե՛ք ընտրատեղամասը բացելիս քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անունները և ազգանունները (նրանց ընտրող/նշանակող սուբյեկտների մատնանշմամբ), ինչպես նաև քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր այլ անձանց անուն-ազգանունները (նրանց ներկայացնող կազմակերպությոան կամ ընտրական սուբյեկտի մատնանշմամբ) և ստորագրությամբ վավերացնել տվեք նրանց:
Քվեարկության օրվա գործավարության մատյանի երկրորդ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 10-րդ և հաջորդ էջերում ևս գրե՛ք ընտրական տեղամասը բացելուց հետո քվեարկության շենք եկած հանձնաժողովի անդամի, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց տվյալները, ընտրատեղամաս նրանց մուտք գործելու ժամանակի մատնանշմամբ և ստորագրությամբ հաստատել տվեք նրանց:

☐ Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնաժողովի հատուկ կնիքի կնքված փաթեթը բացելուց հետո, տվյալ կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում:

☐ Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման նպատակով անցկացված վիճակահանության արդյունքները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

Նկատի՛ ունեցեք.

✓ Եթե հանձնաժողովի անդամը հրաժարվում է կատարել վիճակահանությամբ իրեն շնորհված գործառույթը, տվյալները պետք է գրանցեք քվեարկության օրվա գործավարության մատյանի 25-րդ էջում:

✓ Հանձնաժողովի անդամների վիճակահանությամբ որոշված գործառույթներն այլ անդամի ժամանակավոր փոխանցման դեպքում, տեղեկությունը պետք է գրանցեք քվեարկության օրվա գործավարության մատյանի 5-րդ էջում:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ գրե՛ք ընտրողների ընդհանուր ցուցակի և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի մեջ (այսպիսինի գոյության դեպքում) առկա ընտրողների քանակը: Ցուցադրական արձանագրության և քվեարկության օրվա գործավարության մատյանում հատուկ ցուցակում ընտրողների թիվը գրվում է քվեարկությունն ավարտվելուց հետո:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ գրե՛ք ստացած ընտրական քվեաթերթիկների քանակը:

☐ Ընտրական քվեատուփերի կնքման ժամանակը և ընտրական քվեատուփերի կնիքների անհատական համարները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ և 9-րդ էջերում նշե՛ք ընտրողների գրանցումն իրականացնողներին փոխանցած կնիքների համարները:

☐ Երաշխավորվում է մինչև քվեարկությունը սկսվելը, հանձնաժողովի նախագահի հետ մեկտեղ լրացնել ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևաթուղթը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների): Ուշադրությո՛ւն դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները:

Ժամը 08:00-ից

☐ Ընտրական տեղամաս եկած առաջին ընտրողի մասին տվյալները (անուն, ազգանուն և Վրաստանի քաղաքացու անձնական համար) գրանցե՛ք ստուգողական թերթերում, ստորագրել տվե՛ք նրան: Առաջին ընտրողի մասին տվյալները գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

Քվեարկության գործընթացում նկատի՛ ունեցեք

✓ Եթե նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրա ով լինելը պետք է նշեք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

✓ Եթե ընտրողի դեմքը անձը հաստատող փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը իրար անհամապատասխան համարվեն, քվեարկության օրվա գործավարության մատյանի 29-31-րդ էջերում պետք է գրանցեք համապատասխան տվյալներ և հաստատեք ստորագրությամբ: Գործավարության մատյանին պետք է կցեք ընտրողի կողմից ներկայացված ինքնությունը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Ժամը 09:00-ից

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք, թե որքան ընտրական քվեաթերթիկ է փոխանցվել շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին և նշե՛ք շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրական տեղամասից տանելու ժամանակը:

Ժամը 12:00

☐ Ընտրողների գրանցում իրականացնողների կողմից հաշված քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը նշե՛ք գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:

Ժամը 17:00

☐ Ընտրողների գրանցում իրականացնողների կողմից հաշված քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների քանակը նշե՛ք գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:

Մինչև ժամը 20:00-ն

☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրատեղամաս վերադարձնելուն պես, ստուգե՛ք շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և վնասված քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակի ճշտությունը: Անճշտություն հայտնաբերելու դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները պետք է բացատրագիր գրեն ` պատճառի մատնանշմամբ: Բացատրագրում արտացոլված տվյալները նախատեսե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության տվյալներում:

Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում գրե՛ք ընտրողների ստորագրությոնների թիվը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում, չօգտագործված քվեաթրթիկների թիվը, ինչպես նաև ընտրական տեղամաս քվեատուփը վերադարձնուլ ժամանակը:

Ժամը 20:00-ից մինչև քվեատուփի բացելը

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում նշե՛ք ժամը 20:00-ի դրությամբ հերթում կանգնած ընտրողների քանակը (այսպիսինի գոյության դեպքում):

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 26-րդ էջում նշե՛ք ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անուն-ազգանունները (նրանց ընտրող/նշանակող սուբյեկտների մատնանշմամբ), ինչպես նաև քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր այլ անձանց անուն-ազգանունները (նրանց ներկայացնող կազմակերպության կամ ընտրական սուբյեկտի մատնանշմամբ) և ստորագրությամբ հաստատե՛լ տվեք նրանց:

☐ Քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում նշե՛ք.
- ☐ հանձնաժողովի անդամների միջև հաշվողների գործառույթները վիճակահանությամբ բաշխելու արդյունքները,
- ☐ վիճակահանությամբ որոշված ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների տվյալները, որոնք հաշվողների հետ մասնակցում են վավեր կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվման գործընթացին,
- ☐ քվեաթերթիկները հաշվելու գործընթացի վերահսկման համար դիտորդներից որոշված վերահսկողների տվյալները:

Նկատի՛ ունեցեք.

Եթե հանձնաժողովի անդամը կամ/և ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը հրաժարվում են վիճակահանությամբ որոշված գործառույթի կատարումից, նրա տվյալները պետք է գրանցեք քվեարկության օրվա գործավարության մատյանի 25-րդ էջում:

☐ Հաշվողների կողմից հաշված ընտրողների ստորագրությունների թիվը, ընտրողների գրանցողների կողմից բացատրագրերում նշված տվյալների նախատեսմամբ (այսպիսինի գոյության դեպքում) գրե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և ցուցադրական արձանագրության մեջ:

☐ Առանձին-առանձին փաթեթավորե՛ք ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) ցուցակի սեղանի տարբերակները, չօգտագործված և վնասված քվեաթերթիկները: Մինչև փաթեթների մեջ տեղավորելը կտրե՛ք չօգտագործված և վնասված քվեաթերթիկների անկյունները:

☐ Գրանցե՛ք այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված անձը հաստատող փաստաթղթում/ ընտրողների ցուցակում առկա լուսանկարների միմյանց հետ անհամապատասխանությանը: Նշված տվյալները, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենների թիվը գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 31-րդ էջում:

Կնքե՛ք անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը: Կնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը և համարը, փաստաթղթերի տեսակը: Կնքման գծի վրա ստորագրե՛ք:

Քվեատուփը բացելը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների կազմումը

☐ Հաշվողների կողմից հաշված անվավեր ընտրական քվեաթերթիկների և թեկնածուների կողմից ստացած ձայների քանակը հաշվելուց հետո, հանձնաժողովի նախագահի հետ ստուգե՛ք տվյալների ճշտությունը: Ստացված արդյունքները նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ (այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը նշվում է միայն քվեարկության օրվա գործավարության մատյանում):

☐ Հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացրե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելիս՝ պետք է նկատի առնված լինեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հաստատվում է նրանց ներկա գտնվելը ընտրական տեղամասում: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը պետք է վավերացնեք հանձնաժողովի հատուկ կնիքով:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը գրանցե՛ք գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում:

Նկատի՛ ունեցեք. Ագելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ գրված տվյալներն ուղղել:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և ուղղման արձանագրությունը կազմելու կարգը տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգում՝ Մաս III, Գլուխ III:

☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճեն տրամադրելիս (պահանջելու դեպքում)՝ հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրե՛ք և վավերացրե՛ք դրանք հանձնաժողովի հատուկ կնիքով: Տրված ֆոտոպատճենը գրանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանում: Ֆոտոպատճենը ստացող անձին գործավարության մատյանում ստորագրությամբ հաստատել տվեք ֆոտոպատճենը ստանալը:

Նկատի՛ ունեցեք. Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/ուղղման արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում), պահանջի հիման վրա տրվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից, պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելուց և ֆոտոպատճեններ տրամադրելուց հետո փակե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը և գրանցամատյանը, հաստատե՛ք Ձեր և հանձնաժողովի նախագահի ստորագրություններով, ինչից հետո դրանք վավերացրե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով:

Նկատի՛ ունեցեք.

Գրանցամատյանում և քվեարկության օրվա գործավարության մատյանի 21-րդ-24-րդ էջերում պետք է գրանցեք քվեարկության օրվա բոլոր մտից դիմումները/բողոքները և դիմումատուին/բողոքարկողին տեղեկանք տրամադրեք, որում նշվում է դիմումը/բողոքը ընդունելու ամսաթիվը, ժամը և գրանցման համարը: Տեղեկանքը պետք է վավերացնեք ստորագրությամբ:

Քվեարկության օրվա դիմումի/բողոքի հետ կապված հանձանժողովի քարտուղարի կողմից իրականացվելիք լիազորությունները մանրամասն տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգի IV մասում: